

ք. Երևան

24.12.2018 թ.

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 14.1-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ մշակույթի 04/14.2/8482-18, ՀՀ բնապահպանության 4/02.2/40132-18, ՀՀ գյուղատնտեսության ԳՊ/ԱԲ-1/8841-18, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների 02ՏԱ/22.1ՀԲ/7217-18, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների 03/16.3/9744-18, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների 08/14.1/18736-18 նախարարությունների, Քաղաքաշինության կոմիտեի 06/11.2/6050-18 գրություններով ներկայացրած դրական կարծիքները և նախարարական տարածքային զարգացման և շրջակա միջավայրի կոմիտեի 2018 թվականի դեկտեմբերի 14-ի նիստի N N 24.9/[494996]-18 արձանագրության 4-րդ կետը՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի /Ակներ բնակավայր/ վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,101 հա /կադաստրային ծածկագիր՝ 09-024-0218-010-004/ այլ հողեր փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության /բնակելի տուն/:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ. Տերտերյան

քարտուղար՝



Բ. Մինասյան